# Մաքուր մտածելակերպ սրտի փոփոխության վերաբերյալ

Մաքուր մտածելակերպ ( մաս 3)

*«Հիսուսը մտավ Երիքով և անցնում էր նրա միջով: Եվ ահա մի մարդ՝ Զակքեոս անունով, որ մաքսապետ էր և հարուստ, ուզում էր տեսնել, թե ով է Հիսուսը, բայց բազմության պատճառով չէր կարողանում, որովհետև կարճահասակ էր: Առաջ վազելով՝ մի ժանտաթզենու վրա բարձրացավ, որպեսզի նրան տեսնի, որովհետև այդտեղով էր անցնելու: Երբ այդ տեղը եկավ, Հիսուսը վեր նայեց ու նրան ասաց. «Զակքեո՛ս, շտապի՛ր, իջի՛ր, որովհետև այսօր պետք է քո տանը մնամ»: Նա շտապ իջավ ու նրան ուրախությամբ ընդունեց: Բոլորը, տեսնելով, տրտնջում էին ու ասում. «Մեղավոր մարդու մոտ մտավ հանգիստ առնելու»: Զակքեոսը կանգնեց ու Տիրոջն ասաց. «Տե՛ր, իմ ունեցվածքի կեսն աղքատներին կտամ ու եթե մեկին զրպարտությամբ զրկել եմ, քառապատիկ կվճարեմ»: Հիսուսը նրան ասաց. «Այսօր այս տան համար փրկություն եղավ, որովհետև սա ևս Աբրահամի որդի է, որովհետև Մարդու Որդին եկել է կորածին փնտրելու ու փրկելու»:* Ղուկաս 19:1-10

**Ինչն է պատճառը, որ հաջողակ մարդիք դժվարություն են ունենում Աստծո հետ փոխհարաբերություն ստեղծելու.**

1. Հպարտություն
2. Կեղծ ապահովություն
3. Արդարության վերաբերյալ սխալ եզրակացություն

## Սրտի փոփոխության համար պետք է

### 1. Պատրաստ լինեմ Աստծո նախաձեռնությունների համար

***«Աստված մոտենում է ձեզ Հիսուս Քրիստոսի միջոցով՝ ողջունող ձեռքերով: Անկախ նրանից, թե ով եք դուք կամ ինչ եք արել: Աստված գալիս է ձեզ մոտ, շարունակում է գալ ձեզ մոտ, շարունակում է տարածել Իր սերը ձեզ վրա, մինչև դուք դուրս գաք ծառից և բերեք Նրան տուն»:***

### 2. Հավատամ, որ Աստված սիրում է բոլոր մեղավորներին

*«Մարդու Որդին եկել է կորածին փնտրելու ու փրկելու:»* Ղուկաս 19:10

**Զաքեոսը երկու ճիշտ բան արեց.**

*** Հասկացավ, որ ինքը Աստծո օգնության կարիքը ունի**

*** Գնաց Հիսուսի փնտրելու**

*«Դուք կփնտրեք ինձ ու կգտնեք, երբ ինձ ձեր ամբողջ սրտով կորոնեք:»* Երեմիա 29:13

### 3. Երբեք չհուսահատվեմ

Հիսուսը ուզում է քո սիրտը փոխի և նոր սիրտ տա քեզ:

Հաջորդ քարոզի թեման

**Մաքուր մտածելակերպ ստրեսի վերաբերյալ**

**Հովիվ Սարո Խաչիկեան**